ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-6/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

13.05.2019թ.
Ժամը 15^{30}

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետ Հ. Մելիքյանը.

գնահատողներ՝

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ իրային, ՎՔՆ, կոլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ Գ. Ուխտյանը,

ՀՀ ՊՆ Կ և ՈԿՎ ՀՀ և արտասահմանյան երկրների ուսումնական հաստատություններում կադրերի պատրաստման բաժնի ավագ սպա, մայոր Տ. Հունանյանը,

ՀՀ ՊՆ Կ և ՈԿՎ գլխավոր մասնագետ Վ. Իրիցյանը,

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետի պաշտոնակատար Ա. Սահակյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-6/1» ծածկագրով գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Սահակյան)

1. Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-6/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության, դրանց՝ ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-6/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության, դրանց՝ ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

(Ա. Սահակյան)

1.1 Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՀԾՁԲ 6/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերն առկա են և համապատասխանում են սույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Քանի որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 29.04.2019թ.-ին տրամադրած՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցման մասին տեղեկատվության համաձայն՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ չի ունեցել, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմաններն առկա են և բավարարում են հրավերով սահմանված պահանջներին, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարել իրականությանը համապատասխանող:

1.2 Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան (բավարար) «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ 6/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված մասնակից:

1.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ 6/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված մասնակցին՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամին, պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10 րդ և 36 րդ հոդվածների պահանջները:

1.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-6/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Սահակյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-6/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել ոչ ուշ, քան գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11:00-ն, ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում՝ ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	Հ. Մելիքյան
Գնահատող	Գ. Ուստյան
Գնահատող	Տ. Հունանյան
Գնահատող	Վ. Իրիցյան
Գնումները համակարգող	Ա. Սահակյան